

ԿԱՐԾՔ

Հ. Վ. Հովհաննիսյանի «Վաղ քրիստոնեական դավանաբանական վեճերի կրոնագիտական վերլուծություն (II դարի II կես – V դարի քառորդ)» թ. 00.05 – «Կրոնի տեսություն և պատմություն» մասնագիտությամբ պատմական գիտությունների դոկտորի գիտական աստիճանի հայցման ատենախոսության մասին

Թեմայի արդիականությունը: Հ. Հովհաննիսյանի դոկտորական ատենախոսությունը վերաբերում է այնպիսի թեմայի և ժամանակաշրջանի, որոնք առանցքային նշանակություն ունեն քրիստոնեության, ի մասնավորի եկեղեցու և քրիստոնեական դավանաբանական վեճերի պատմության լուսաբանության տեսանկյունից: Դարերի հեռավորությունից, հատկապես ժամանակակից իւառնիճաղանչ ու վտանգաշատ աշխարհի դիտակետից II–V դարերում տեղի ունեցած կրոնաստվածաբանական բանավեճերը գուցե ոչինչ չասեին նյութապաշտ ու անցյալի նկատմամբ որևէ հետաքրքրություն չունեցող մարդուն, սակայն ինչպես առհասարակ առանց անցյալի ու պատմական հիշողության, այնպես էլ մասնավորապես անցյալի հոգևոր ժառանգության ուսումնասիրության անհնար է մտածել անհատների ու ազգերի ինքնության, նրանց կեցության ամրողականության ու կյանքի իմաստավորվածության մասին: Դա առավելապես վերաբերում է մեզ, որպես առաջինը քրիստոնեությունը պետական կրոն ընդունած ազգ, որի պատմությունը անմիջականորեն թե միջնորդավորված շաղկապված է այդ ժամանակահատվածում համարդիստոնեական աշխարհում տեղի ունեցող կրոնաստվածաբանական, եկեղեցական ու աշխարհիկ քաղաքական գործընթացների հետ: Այս հանգամանքը պարտավորեցնող է այն իմաստով, որ քրիստոնեության ու եկեղեցու պատմությանն աղերսվող հարցերը պետք է հանապազ գտնվեն հայագետների ու շաղրակացների կենտրոնում: Անշուշտ, մեզանում ատենախոսությունում քննարկվող հարցերը այս կամ այն չափով ուսումնասիրվել են, սակայն հետազոտական անելիքներն այնքան շատ են, որ անհրաժեշտություն է առաջացել համակարգված, մեթոդաբանական նորագույն գործիքակազմով և ավելի համապարփակ ու ընդգրկուն համատեքստում վերլուծել ու զնահատել ընդհանրական եկեղեցու պատմության կարևորագույն էջերը, վաղ քրիստոնեական դավանաբանական

ու քրիստոսաբանական վեճերը, դրանց ծագման ու դրսևորման առանձնահատկությունները՝ հընթացս վերախմաստավորելով դրանց վերաբերյալ մասնագիտական գրականության մեջ տարածում գտած միակողմանի ու աշառու մոտեցումները:

Գիտական նորույթները: Այս առումով Հ. Հովհաննիայանի դոկտորական ատենախոսությունը հայ կրոնագիտական ու աստվածաբանական գրականության մեջ առաջինն է, որում եկեղեցու և դավանանքի պատմության համար սկզբունքային նշանակություն ունեցող քրիստոսաբանական ու դավանաբանական հարցերը վերլուծվել և արժենորվել են պատմական գործընթացների և կրոնադավանաբանական ու կրոնափիլիսոփայական մտքի դրսևումների համաձիրում: Ընդ որում, սույն աշխատանքը գրված է հարուստ փաստական նյութի, սկզբնաղբյուրների, վավերագրերի, բնագրերի և հայալեզու ու օտարալեզու հետազոտական գրականության վերլուծության հիման վրա, ինչը մի կողմից վկայում է բննարկվող հարցերի վերաբերյալ հեղինակի քաջատեղյակության մասին, իսկ մյուս կողմից՝ ապահովում պաշտպանության ներկայացվող տեսական դրույթների ու գիտական նորույթների հավաստիությունը:

Հեղինակն իր առջև դրած նպատակին հասնելու համար առաջադրել է քննարկվող ժամանակաշրջանի կրոնաստվածաբանական վեճերի պատմության նոր պարբերացում: Եթե մասնագիտական գրականության մեջ տարածված էր այն պարբերացումը, ըստ որի ներեկեղեցական դավանաբանական վեճերը ընթացել են երկու՝ երրորդաբանական և քրիստոսաբանական փուլերով, ապա ատենախոսը առանձնացնում է երեք փուլ՝ վարդապետական կամ վաղ քրիստոսաբանական ըմբռնումներ-քրիստոսաբանական դոկտրինալ համակարգեր-դոկտրինալ համակարգերի միջև դավանաբանական վեճեր: Այս պարբերացումը նրան հնարավորություն է տալիս տեսնելու կրոնաստվածաբանական մտքի շարժընթացի ուղղվածությունները և հստակ պատկերացում կազմելու յուրաքանչյուր փուլում բննարկվող հարցերի և դրանց լուծումների յուրահատկությունների մասին: Առաջին փուլում, ըստ ատենախոսի, առաջադրված հավատքային լուծումները, որոնց հիմքում ընկած էին կրոնափիլիսոփայական գաղափարները և Աստվածաշնչի մեկնաբանությունները, թե՝

իմաստային և թե՛ ձևակերպումների առումներով թերի ու անկատար էին, սակայն արժեքավոր էին աստվածաբանական եզրերի մշակման փորձերը: Երկրորդ՝ քրիստոսաբանական դոկտրինալ փուլում առաջադրվում են ավելի հասուն ուսմունքներ, որոնք վերաբերում են մասնավորապես երրորդաբանության հարցերին: Ատենախոսը կարծում է, որ վերիմաստավորման ու ճշգրտման կարիք ունի ապոլինարականության վերաբերյալ եղած այն տեսակետը, որը փորձում է վերջինիս մեջ տեսնել ալեքսանդրյան քրիստոսաբանության հիմքերը և դա նույնացնել հակաքաղկեդոնության հետ: Նա առաջադրում է նաև գիտական նորույթ պարունակող այն դրույթը, որ չպետք է ալեքսանդրյական ու անտոքիական դպրոցների տարբերությունը հանգեցնել նրանց կողմից օգտագործվող մեթոդաբանությանը: Ալեքսանդրիացիները և անտիոքիացիները սկզբունքորեն դեմ չեն Աստվածաշնչի մեկնաբանության այլաբանական և պատմական մեթոդներին, ուստի ճիշտ չէ այն տեսակետը, որ նրանք առաջնորդվում էին միայն դրանցից մեկով: Բնականաբար, ատենախոսը անհամեմատ մեծ ուշադրություն է դարձնում դավանաբանական վեճերի երրորդ փուլին, այն բնութագրելով որպես դոկտրինալ համակարգերի մրցակցության փուլ՝ նկատի ունենալով անտիոքյան, ալեքսանդրյան և կապաղովլյան դպրոցների միջև ծավալված բանավեճերը: Ատենախոս՝ վերլուծելով և գնահատելով տվյալ ժամանակաշրջանի նշանավոր մտածողների քրիստոսաբանական ու մարեմաբանական հայացքները, անում է նաև ընդհանրական բնույթի եզրակացություններ, հընթացս քննադատում մասնագիտական գրականության մեջ տարածում գտած միակողմանի դիրքորոշումները, որոնք առավելապես վերաբերում են ալեքսանդրյան ու կապաղովլյան դպրոցներին: Ատենախոսի ուշադրության կենտրոնում է հատկապես Նեստորի հայացքների գնահատության հարցը, որովհետև դրանք են հիմք հանդիսացել քրիստոսաբանական վեճերի բորբոքման համար: Այս և մյուս մտածողների տեսակետների վերլուծություններից հետո ատենախոսը անում է եզրակացություններ, որոնք գիտական նորույթներ են, նոր տեսանկյունից են իմաստավորում հայտնի իրողությունները: Ընդհանուր առմամբ հարկ է արձանագրել, որ ատենախոսին հաջողվել է հավաստի ու համոզիչ կերպով ներկայացնել այդ բարդ ու հակասական ժամանակահատվածում տեղի ունեցած դավանաբանական վեճերի

նրբությունները և մեթոդաբանական դիտակետից անաշառ գնահատել այդ վեճերի վերաբերյալ մասնագիտական գրականության մեջ եղած կարծիքները:

Դիտողություններ և նկատառումներ: Հ. Հովհաննիսյանի աշխատանքը զերծ չէ թերություններից, վրիպակներից ու վիճահարույց պնդումներից: Անդրադառնամ դրանցից մի քանիսին: Առաջին, հեղինակը գրում է, որ ատենախոսության ժամանակագրական սահմանները ընդգրկում են 160-420-ական թվականները, որի «ընտրությունը զիտականորեն հիմնավորված է» (Սեղմագիր, էջ 4) և թելադրված է մի շարք գործոններով (Ատենախոսություն, էջ 5): Գուցե մասնագիտական գրականության մեջ այդ ժամանակագրական սահմանները հիմնավորված են, սակայն ատենախոսության մեջ այդ հիմնավորումը ակնհայտ չի երևում, համենայն դեպք շարադրված չեն այդ ընտրությունը պայմանավորող գործոնները: Ի դեպ, ատենախոսության մեջ մի տեղ նշվում է 160-420-ական թթ., մի այլ տեղ՝ 160-430-ական թվականները: Օրինակ, ատենախոսության երրորդ գլուխ վերնագիրն է՝ «Քրիստոսաբանական դավանական վեճերը 420-430-ական թվականներին», և նշվում է, որ այդ վեճերն սկսվել են 428 թվականից (մինչդեռ V դարի առաջին քառորդն ավարտվում է 425 թվականին): Ատենախոսը դավանաբանական վեճերի սկանության մեջ առանձնացնում է երեք փուլ՝ սակայն չի նշում դրանց ժամանակագրական սահմանները: Քանի որ ատենախոսության մեջ տրված չեն ժամանակագրական սահմանների ընտրության բացասարությունը, ուստի հարց է ծագում, թե ինչո՞ւ այն չի հասցվել մինչև 451թ., Քաղկեդոնի տիեզերական ժողովը, որը հայտնի իմաստով քրիստոսաբանական վեճերի հանգուցալուծման մի կարևոր հանգրվան էր: Երկրորդ, ատենախոսը անընդհատ շեշտում է այն միտքը, որ նպատակ ունի օբյեկտիվորեն վերլուծել ու գնահատել թե՛ պատմական իրողությունները, թե՛ առանձին մտածողների ու դպրոցների գաղափարները և թե՛ դրանց վերաբերյալ եղած տեսակետները: Մի կողմ թողնելով սուբյեկտի օբյեկտիվության հավակնելու նկատմամբ մեթոդաբանական-փիլիսոփայական ողջամիտ կասկածանքը, նշեմ, որ շատ դեպքերում ատենախոսին հաջողվել է դա անել՝ հիմնավոր փաստարկներ բերելով աշառու տեսակետների դեմ: Բայց որոշ դեպքերում նաև այն տպավորություն եմ ստացել, որ քննադատությունների ալարն ուղղված է առավելապես քաղկեդոնական աստվածաբանությանը կողմնակից այն վերլուծաբաններին, որոնք փորձում են խեղաթյուրված ներկայացնել

ալեքսանդրիացիների ու կապաղովկիացիների հայացքները և նրանց տեղն ու դերը ընդհանրական եկեղեցու պատմության մեջ:

Երրորդ, ատենախոսը մեթոդաբանական առումով իրավացի է, որ անքույլատրելի է համարում, երբ, ասենք, II-IV դարերի իրողությունները գնահատում են ավելի ուշ՝ VI-IX դարերի տեսական մտքի եզրույթներով ու չափանիշներով: Փաստորեն, II-V դարերը մի ժամանակաշրջան եր, երբ հունական փիլիսոփայական դպրոցներում կրթված մտածողները փորձում եին Հրաշքի համար գտնել տրամաբանորեն համոզիչ բանաձևումներ, ուստի, անկախ ձեռքբերած արդյունքներից, նրանց պետք է գնահատել որպես Ճշմարտության համար պայքարող մտքի ասպետներ, որոշ դեպքերում՝ նաև նահատակներ, և գնահատումների պարագային լինել ավելի հանդուրժողական նրանց սխալների ու վրիպումների նկատմամբ: Ատենախոսը իրավացի է, երբ գրում է, որ քանի դեռ մշակված չէր միասնական եզրաբանություն, ապա «անհամեմատ ուշ մշակված եզրերի հիման վրա անցյալի ցանկացած մեկնաբանություն «կամայականություն» որակելը այլ բան չէ, քան անըմոնողություն, չընկալվածություն կամ միտումնավոր նենգափոխություն» (Ատենախոսություն, էջ 393): Չնայած այսպիսի մոտեցման, այնուհանդերձ, ինչպես այս, այնպես էլ նմանաբնույթ աշխատություններում հանդիպել եմ այնպիսի գնահատականների, երբ ջատագովական շրջանի քրիստոնյա որևէ մտածողի հայացքները գնահատվել են ուղղադավան ուսմունքի տեսանկյունից, այսինքն՝ դրանք համարվել են հերձվածողական, մինչդեռ նրանց ժամանակներում դեռևս բանաձևած ու եկեղեցու կողմից հաստատված չեին ուղղադավանության սկզբունքները:

Չորրորդ, ատենախոսը իրավացիորեն նկատում է, որ առանձին մտածողների, առհասարակ վիճաբանող կողմերի փաստարկները խարսխաված եին փիլիսոփայական որոշակի գաղափարների ու պատկերացումների վրա, սակայն ատենախոսությունում դրանք բավարար չափով չեն ներկայացվում և չեն լուսաբանվում: Ըստ իս՝ այդպիսի վերլուծության առկայության դեպքում էապես կշահեր հետազոտությունը, որովհետև փիլիսոփայության տեսակետից դավանաբանական վեճերի նպատակը Հրաշքը՝ Աստծու մարդեղացումը, մարդկային բանականության համար հասկանալի լեզվով ներկայացնելն էր: Մեկնաբանությունների բազմազանության հիմքում ընկած եին

պլատոնականների, արիստոտելականների, ստոիկների, նորպլատոնականների փիլիսոփայական գաղափարները:

Հինգերորդ, ատենախոսությունում առկա են խմբագրման կարիք ունեցող հատվածներ ու առանձին արտահայտություններ, ոչ այնքան հաջող ձևակերպումներ ու վրիպակներ: Օրինակ, գիտական նորույթները թվարկելիս գրեթե ամեն անզամ օգտագործվում է «Վավերագրերի, սկզբնաղբյուրների, բնագրերի համեմատական վերլուծությամբ, կրոնագիտական ու աստվածաբանական քննական վերլուծությամբ...» արտահայտությունը, մինչդեռ դա կարելի էր սկզբից գրել, այնուհետև թվարկել գիտական նորույթները: Ի դեպ, հարկ է նշել, որ գիտական նորույթ պարունակող որոշ դրույթներ առհասարակ չեն ներառվել նորույթների ցանկում: Կարծում եմ, այս հանզամանքը հաշվի կառնվի, եթք կկազմվի Մասնագիտական Խորհրդի Եզրակացությունը: Թվագրված չորրորդ նորույթն ավարտվում է հետևյալ տեսքով՝ «Փաստարկված ձևով մերժվել է նաև այս փուլում հիմք դրված քրիստոսաբանական դավանաբանական վեճերի մասին մասնագիտական գրականության հանրաճանաչ տեսակետը» (Ատենախոսություն, էջ 13, Սեղմագիր, էջ 9): Նախ, պետք է գրել ոչ թե «այս փուլում հիմք դրված», այլ «այս փուլի» կամ «այս փուլում տեղի ունեցած վեճերի...», երկրորդ, մասնագիտական գրականության մեջ այդ վեճերի վերաբերյալ գոյություն ունեն տարբեր տեսակետներ, ուստի պարզ չե, թե հեղինակը դրանցից ո՞րը նկատի ունի: Եթե ամենահանրաճանաչը, ապա ճիշտ կլիներ ներկայացներ այդ տեսակետը: Դարձյալ, Ատենախոսության էջ 406 կարդում ենք՝ «Այդ կերպ Դիոդորոսի և Թեոդորոսի քրիստոսաբանական հայեցակարգում Քրիստոսի բնութենական հատկանիշների փոխանակությունը գոյաբանական մետաֆիզիկական մեկնաբանություն չի տրվել»: Սեղմագրում նույն միտքը ձևակերպված է անհաջող՝ «Դիոդորոսի և Թեոդորոսի քրիստոսաբանական հայեցակարգում Քրիստոսի բնութենական հատկանիշների փոխանակությանը գոյաբանական մետաֆիզիկական մեկնաբանություն չի ունեցել» (Սեղմագիր, էջ 36, ընդգծված տեղերը խմբագրելի են):

Եզրակացություն: Չնայած նկատված թերություններին ու վիճակարույց պնդումներին, Հ. Վ. Հովհաննիսյանի ատենախոսությունը պատշաճ գիտական մակարդակով շարադրված և գիտական նորույթներ պարունակող ավարտուն ու

ինքնատիպ աշխատանք է, որը կարող է գնահատվել որպես էական նվաճում գիտության տվյալ բնագավառում:

Ատենախոսության սեղմազիրը համապատասխանում է ատենախոսության բովանդակությանը:

Հաշվի առնելով ատենախոսության գիտական արժանիքներն ու գիտական նորույթների հավաստիությունը, տեսական հարցադրումների արդիականությունը, հետազոտության տեսական ու գործնական նշանակությունը, կարծում եմ, որ Հ. Վ. Հովհաննիսյանի «Կաղ քրիստոնեական դավանարանական վեճերի կրոնագիտական վերլուծություն (II դարի II կես – V դարի քառորդ)» թ. 00.05 – «Կրոնի տեսություն և պատմություն» մասնագիտությամբ պատմական գիտությունների դոկտորի գիտական աստիճանի հայցման ատենախոսությունը համապատասխանում է ՀՀ գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի 8-րդ կետին և ատենախոսը արժանի է իր հայցած գիտական աստիճանին:

Պաշտոնական ընդդիմախոս՝

Փիլիսոփայական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր  U.U. Զաքարյան
23.01.2020թ.

Փիլիսոփայական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր U.U. Զաքարյանի ստորագրությունը հաստատում եմ Երևանի պետական համալսարանի գիտական քարտուղար, պատմ. գիտ. թեկնածու Լ.Ս. Հովսեփյան

